ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Գ.Պ.

Սովորույթների և ավանդույթների համակարգի միջոցով յուրաքանչյուր ժողովուրդ վերարտադրում է իրեն, իր մշակույթը, բնավորությունը, սերունդների հոգեբանությունը: Որևէ ազգի, նրա մշակույթի մասին խոսելիս պետք է նախ և առաջ հաշվի առնել ազգային սովորությունները և ավանդույթները, որոնք անպայման անդրադարձվում են ժողովրդական ստեղծագործություններում: Ավանդույթներին պետք է վերագրել հասարակական հարաբերություններում ծնված ազգային գաղափարախոսությունը, բարքերը: Դրանք նոր սերնդի մեջ այն հատկությունների վերարտադրության գործընթացն են, որոնք հղկվել են պատմության ընթացքում, տվյալ ժողովրդի կողմից, ըստ ավանդական մշակույթի պահանջների: Ավանդույթներն ուսուցողական և դաստիարակչական դեր ունեն, և դրանց վերջնական նպատակը հաջորդ սերունդներին այն հունով տանելն է, որով զարգացել է տվյալ ժողովրդի ավագ սերունդը:

Ի տարբերություն ավանդույթների, սովորույթը որոշակի իրավիճակում միշտ որոշակի պահանջ է ներկայացնում մարդու հոգևոր հատկությունների նկատմամբ: Սովորույթը մանրամասն ազդարարում է՝ ինչը կարելի է և ինչը չի կարելի անել, թեև չի մանրամասնում, թե ինչպես պետք է անել: Սովորույթը սերունդների վարքի ուղղորդումն է կոնկրետ իրավիճակում գործողությունների մանրամասն կանոնակարգումով:

Սովորույթները և ավանդույթները հիմնականում ունեն երկու գործառույթ. ա) հասարակական հարաբերությունների կայունացման միջոց են, բ) իրականացնում են հարաբերությունների վերարտադրությունը նոր սերնդի կյանքում: Դրանց տարբերությունների հիմք է հասարակական հարաբերությունների բնույթը, հարաբերություններ, որոնց վերարտադրությունով էլ հանդես են գալիս սոցիալական երևույթները: Դրանք շաղկապված օղակներ են, որոնցով ավագները փոխանցում են սոցիալական վարքի իրենց փորձը, բարոյական համոզմունքները, մեթոդներն ու ձևերը:

Ավանդույթների և սովորույթների միջև առկա ընդհանրությունը դրանք միավորում է սոցիալական երևույթների միակարգ խմբերում: Այլ կերպ, կարող է թյուր պատկերացում առաջանալ, թե իբր ավանդույթները և սովորույթները երկու անկախ վարքագծեր ու հոգևոր կյանքի հասարակական ձևեր են, սերունդների հաջորդականության գործընթացում մեկուսացված երկու սոցիալական կառույցներ:

Չնայած իրենց տարբերություններին, սովորույթները և ավանդույթները կատարում են ընդհանուր՝ հասարակական հարաբերությունների կայունացման և վերարտադրության դեր: Երկուսն էլ ներկայացնում են «սոցիալական ժառանգության»՝ սերունդների հաջորդականության մեխանիզմներ: Դրանք իրենց այդ գործառույթն իրականացնում են տարբեր ճանապարհներով և միջոցներով: Նոր սերունդներին փոխանցելով ավագների գործունեության

ճշգրտված նմուշները, սովորույթները նշում են՝ ինչ կարելի է անել, իսկ ինչը՝ ոչ: Պարզ, ստերեոտիպ, կրկնվող հասարակական հարաբերությունների գործընթացի կազմակերպման միջոցով սովորույթները աստիճանաբար ձևավորում են այդ հարաբերությունների իրականացման ամենաբազմազան մեթոդներ:

Առօրյա, պարզ հարաբերությունների շրջանակում կարգավորվող սովորույթներում այդ հարաբերությունների իրականացման համար գոյություն ունի մեթոդների ոչ պակաս բազմազանություն, քան բարդ հարաբերությունների ոլորտում, որոնց հիման վրա գործում են ավանդույթները: Վերցնենք, օրինակ, այնպիսի կրկնվող ստերեոտիպ, ինչպիսին է մարդկանց հանդիպումը փողոցում, հասարակական վայրերում: Այդ հարաբերության ընդհանուր արտահայտման ձև է ողջույնը: Յուրաքանչյուր ժողովրդի մեջ առաջացել է սովորույթի համակարգ՝ մանրամասն կանոնակարգումով, յուրաքանչյուր իրավիճակին համապատասխանող վարքով:

Սովորույթը չի բովանդակում դաստիարակչական նպատակներ, սակայն նաև զուրկ չէ դաստիարակչական գործառույթից: Այդպիսի գործառույթները հանդես են գալիս երկու ձևով՝ սովորույթի միջոցով անձի հոգևոր կերպարի որոշակի գծերի ուղղակի ձևավորում և խիստ կազմակերպված ներմիջավայրային ամենօրյա հարաբերությունների կանոնակարգում, որից չեղումը քննադատվում է հասարակական կարծիքով:

Այս սովորույթներից բացի, որոնցում ոչինչ հնարավոր չէ փոխել՝ չխաթարելով դրանց դաստիարակչական գործառույթները, կան նաև այնպիսիները, որոնց գործառույթները կարող են արմատականորեն փոխվել՝ պահպանելով իրենց դաստիարակչական նշանակությունը: Այդպիսի սովորույթներում դաստիարակչական «բեռը» բաշխվում է ոչ թե գործողությունների վրա, այլ իրականացվում է գործողության խորհրդանշական իմաստով: Ինչպես նշում են Ա.Դրիժոն և Լ.Մինցը, զարգացման տարբեր աստիճաններում գտնվող ազգերի խորհրդանշական գործողությունները, այնուամենայնիվ, կայուն և կապակցող նշանակություն են արտահայտում[1]: Տարբեր ժողովուրդների խորհրդանշական գործողությունների արտահայտություն է հանդիպման ժամանակ մարդկանց հարգանքի ձևը մեկը մյուսի նկատմամբ: Եվրոպացին դա արտահայտում է ձեռքի սեղմումով. դեռևս Հոմերոսն էր ասում, որ այն հայտնի էր տրոյացիներին[2]: Չինաստանում ողջույնի ընդունված ձևը (խորհրդանիշը) գլխի թեթևակի խոնարհումն է: Հնդկաստանում այդ խոնարհումը ուղեկցվում է ձեռքերի ափերը միացնելով կրծքի վրա: Պատմության զարգացման ընթացքում այդ գործողությունները, կրելով այլ ժողովուրդների բազմաթիվ շփումների կնիքը, ազգային քաղաքակրթությունների մերձեցման համակարգում, յուրաքանչյուր ժողովրդի համար կորցնում են կտրուկ սահմանազատումը՝ վերամշակվելով բոլոր ազգերի համար համընդհանուր գործողության կանոնների: Այսպես, անցյալում ծայրահեղորեն բազմազան էին ազգային տարազները, մինչդեռ, այսօր, ավելի կամ պակաս չափով, բոլոր ազգերի տարազները փոխվել են՝ նմանվելով միմյանց, ավելի շատ՝ եվրոպական մոդելին:

Ողջույնի տարբեր խորհրդանիշերն այդ սովորույթի՝ բարյացակամության արտաքին ձևն են, սակայն աշխարհի բոլոր ազգերի մեջ էլ առկա է դրա միասնական բովանդակությունը՝ բարյացակամ լինել հանդիպման ժամանակ:

---

[1] Դրիժոն Ա., Մինց Լ., Մարդիկ և սովորույթներ, Ե., 1987, էջ 22:
[2] Հոմերոս, Իլիական, Ե., 1955, էջ 104, 136, 147 և այլն:

Անկախ նրանից, թե խոսքային ինչ ձև ունի այդ բարյացակամությունը (հին ռուսերեն՝ «բարի գալուստ» կամ ժամանակակից ռուսերեն՝ «բարև ձեզ», գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն՝ «բարի օր», հին հունարեն՝ «ուրախացիր», պարսկերեն՝ «եղիր ուրախ», չինարեն՝ «կերել ես դու»), այն միշտ եղել է բոլոր ժողովուրդների և ազգերի ողջույնի ընդհանուր բովանդակությունը:

Սովորույթը, չնայած ազգային փոփոխվող ձևերի խորհրդանշական գործողություններին, գոյատևում է: Ոչինչ չի փոխվի սովորույթի բովանդակությունից, եթե չինացին գլխի խոնարհման փոխարեն սեղմի ձեռքը և ասի՝ բարև ձեզ: Խորհրդանշական գործողությունները, որոնցով խիստ պայմանավորված է առօրյա կյանքը, կատարում են բացառապես դաստիարակչական դեր՝ իրենց պահպանման խիստ պահանջով, այն իրավիճակների որոշակիությամբ, որոնցում դրանք կատարվում են և հաստատում մարդկանց փոխհարաբերությունների կարգը: Եթե հասարակության մեջ յուրաքանչյուրն անի իր կամեցածը, առանց հաշվի առնելու առկա կանոնները, ապա մարդկանց միջև սոցիալական կապը կքայքայվի:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սոցիալական մեխանիզմների առաջացումը և զարգացումը ժառանգորդման խնդրում բավական կարևոր դեր են կատարել՝ պահպանելով հասարակական հարաբերություններում օրենքների իմացությունն ու դրանց փոխանցումը հաջորդ սերունդներին:

Սովորույթների համակարգում վարքի խիստ կանոնակարգումը կատարում է սերնդային սոցիալական ժառանգորդման կոդի գեր: Սովորույթները և ավանդույթները՝ որպես հասարակական հարաբերությունների իրականացման միջոց, միշտ առաջանում են, զարգանում ու մահանում, այն է՝ նոր հարաբերությունների առաջացումով ամբողջությամբ չեն վերանում հին սովորույթներն ու ավանդույթները, և առաջանում նորերը: Արմատական փոփոխություններով հանդերձ, սովորույթների և ավանդույթների առավել կայուն մասը միշտ էլ պահպանվում է: «Սովորույթները, - գրում է գաղափարախոսական փիլիսոփայության հիմնադիրներից Ուի.Ջեմսը, - որ հասարակական հարաբերություններում հսկայական թափանիվի դեր են խաղում, ամենաարժեքավոր պահպանողական պայմանն են սոցիալական կյանքում: Միայն դա է մեզ բոլորիս զսպում օրինականության սահմաններում»[3]: Սովորույթները և ավանդույթները որքան առավել են բացահայտում իրենց դաստիարակչական ուժը, այնքան դրանց կողմից կարգավորվող հասարակական և սոցիալական հարաբերությունները դառնում են համասեռ: Ավագ սերնդի վարքի փորձն ընկալվում է որպես խնդրի միանշանակ լուծում, և այդ որոշման հետ չեն համատեղվում վարքի այլ տարբերակներ:

Սովորույթների և ավանդույթների կառուցվածքային գործողություններից պահանջվում է բաղադրիչ մասերի փոխազդեցություն՝ նոր սերնդի հոգևոր կերպարի վերարտադրության համար: Անհրաժեշտ է պարզ և լիարժեք պատկերացումներ ունենալ, թե ինչը և ինչպես է փոխանցվում մի սերնդից մյուսին: Առանց այդ պատկերացումների չի կարող լինել նպատակաուղղված մոտեցում սովորույթների և ավանդույթների խնդրին՝ որպես սոցիալական երևույթների, առանց դրանց հնարավոր չէ հասկանալ նոր սերնդի հոգևոր կերպարի վերարտադրության «տեխնոլոգիան»՝ իրեն նախորդածների նմուշով: Յան Ամոս

---

[3] Джемс У., Психология, М., 1922, с. 117.

Կոմենսկին, ուսումնասիրելով տարբեր ժողովուրդների մշակույթը, վարքի և դաստիարակության փորձը, լավագույնս է ներկայացրել այդ ամենը[1]: Սովորույթների, ավանդույթների ամբողջ գունային բույրը (գամման) ընկալելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ տվյալ ժողովրդի մտածելակերպի և հոգեբանության առանձնահատկությունները:

Նշենք, որ սովորույթների և ավանդույթների ուսումնասիրությունները զրկված են ամբողջական մոտեցումներից. յուրաքանչյուր հեղինակ ներկայացնում է խնդրի որևէ մեկ կողմը որպես ամբողջություն: Ինքնագրական է, որ իբրև այդպիսին գլխավորապես ներկայացվում է սովորույթների, ավանդույթների միայն մեկ կողմը՝ ծիսակատարությունը: Անճշտություններից խուսափելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել սովորույթների և ավանդույթների կառուցվածքը որը, մեր կարծիքով, ձևավորվում է հետևյալ տարրերից. 1. Հասարակական հարաբերությունների գաղափարախոսական օղակներ, որոնք չեն կարգավորվում իրավաբանական կանոնակարգով: 2. Գաղափարական հարաբերությունների բովանդակություն (քաղաքական հայացքներ, կանոններ, պատկերացումներ, կրոնական համոզմունքների դրույթներ): 3. Անհատի հոգևոր հատկությունները բացահայտող գործողություններ (արարքներ), որոնք որոշակի հարաբերությունների համակարգում պահպանում են հույզերի և զգացմունքների բոլոր դրսևորումները (բարոյական, հուզական, կրոնական): 4. Միսակատարությունը՝ որպես սովորույթ, սովորույթի մեկ կողմ հաստատագրված հասարակական կյանքում:

Սովորույթները և ավանդույթները բնույթով յուրատեսակ «փաթեթներ» են, որոնք իրենց գաղափարներով, հոգևոր հատկություններով, ծիսակատարության արարողություններով, ավագ սերունդը փոխանցում է նոր սերունդներին՝ համատեղ գործունեության ընթացքում ուղղորդելով նրա գործողությունները:

Իրական գործառութային վիճակում այդ «փաթեթների» բաղադրիչ մասերը բաժանվում են ըստ ժամանակի: Կարգը, որով թվարկված են սովորույթների, ավանդույթների կառուցվածքային տարրերը, համապատասխանում է այդ երևույթների պատմական զարգացման գործընթացի հաջորդականությանը և երիտասարդ սերունդների կողմից դրանց հիմնական փուլերի ընկալմանը:

Ավանդույթների և սովորույթների զարգացման առավել արդյունավետ կողմ կարելի է համարել ծիսակատարությունը: Դրանով է հավանաբար պայմանավորված այն հանգամանքը, որ ծիսակատարությունը հաճախ սխալմամբ ընդունում են որպես սովորույթ կամ ավանդույթ: Միսակատարությունը չի ուղեկցում սովորույթին, ավանդույթին իր գործառույթի իրականացման ողջ ընթացքում, այլ հանդես է գալիս գործընթացի որոշակի պահի՝ արտահայտելով, խորացնելով մարդկանց ընդհանուր մտքերը, զգացմունքները: Սովորույթի կամ ավանդույթի հետ ծիսակատարության սխալ նույնացումը պատճառ է դառնում սոցիալական այդ երևույթների մյուս տարրերի՝ տեսադաշտից դուրս մնալուն, որոնց ավելի կամ պակաս զարգացումը ծիսակատարության հաջող կայացման նախապայմանն է: Միսակատարության ձևը առաջ է գալիս միայն այն ժամանակ, երբ սովորույթների և ավանդույթների մյուս բաղադրիչ մասերը հաստատվել են հասարակական և անձնական կյանքում: Միսակատարության գործնական

[1] Կոմենսկի Ց.Ա., Մեծ դիդակտիկա, Ե., 1962:

զարգացման ընթացքում չի կարելի ծիսակատարության ձևը գիտարկել սովորույթների և ավանդույթների այնպիսի կողմերից մեկուսացված, ինչպիսիք են հասարակական հարաբերությունների բովանդակությունը և մարդկանց հոգևոր հատկությունները:

Ծիսակատարությունը սովորույթի և ավանդույթի կառուցվածքի այդ մասնիկը, գործողության համակարգ է, երբեմն բավականին խորհրդանշական, որտեղ արտահայտված են նախորդ սերունդների մտքերը և զգացմունքները, որոնք կոչված են իրականացնելու հասարակական հարաբերությունների բնական գործառույթները: Ծիսակատարության առաջացումը սովորույթների և ավանդույթների ձևավորման եզրափակիչ փուլն է: Ավանդույթի սկզբնական շրջանում սովորույթները կարող են չունենալ զարգացած ծիսական կողմ: Ավանդույթի և սովորույթի նշված տարրերը միշտ գտնվում են փոխադարձ, օրգանական կապի մեջ. դրանցից ոչ մեկը մեկուսի չի առաջանում:

Որպես մտքերի, զգացմունքների ամրապնդման և խորացման գործառույթ՝ միշտ էլ սովորույթների և ավանդույթների կառուցվածքի էական կողմ է եղել հասարակության գաղափարախոսական հարաբերությունը, որով որոշվել են դրանց բովանդակությունը, անհատի հոգևոր հատկությունների համակարգը, ծիսակատարության գործողությունների բնույթը:

Հասարակական գաղափարախոսական հարաբերությունների համակարգում սովորույթների և ավանդույթների փոփոխությունները դանդաղ են կատարվում, և անմիջական դիտարկման համար շատ աննշան են այդ տարբերությունները: Սակայն սովորույթները և ավանդույթները դիտարկելով որպես ժողովրդական դաստիարակչական գործընթացի արդյունք, որի միջոցով, ինչպես վերը նշվեց, յուրաքանչյուր ժողովուրդ վերարտադրում է իրեն, իր հոգևոր մշակույթը, բնավորությունը, սերունդների հոգեբանությունը, այն պատք է գործ պահել որոշակի ցնցումների հետևանքով ժամանակների կապի խզումից, որը, իհարկե հետագայում մի գործողությամբ չես վերականգնի: Ուստի անհրաժեշտ է բացառիկ վերաբերմունք ունենալ սովորույթների և ավանդույթների հանդեպ:

О РАЗЛИЧИЯХ И ЕДИНСТВЕ ОБЫЧАЕВ И ТРАДИЦИЙ

ОВАКИМЯН Г.П.

Резюме

Обычаи и традиции являются социальным механизмом, осуществляющим передачу общественных ценностей от поколения к поколению и тем самым формирующим внутреннее единство и национальное своеобразие культуры народа.

Одновременно следует указать также на различия между обычаями и традициями, важную социально-психологическую закономерность исторического развития народных обрядовых форм, возникновение простых норм морали и народных нравственных традиций.